

վերը յիշուածներէ նաեւ հետեւեալը. « Տրապիզոնի եւ Փառնակիոյ վերեւն են Տիրաբէնք եւ Խաղարիք (Χαλδαῖοι), եւ Սանք (= Ծանք, Σάγγοι) գորոնք յառաջ Մակրոն (յ.թ. հ.յ. Μακρωνας) կը կոչէին, եւ Փոքր-Հայաստան » (ή μικρά Ἀρμενία. Ստրաբոն c. 548): Հայ հին մատենագրութեան մէջ « Խաղարիք » կը նշանակէ Պոնտական լեռնաշղթայն՝ աւելի կամ նուազ խորութեամբ, իբր սահմանակից Բարձր Հայոց եւ Տայոց, ինչպէս արդէն ղիրքը կը բերէր: Անագանագոյն մատենագրութեան մէջ որոշ կերեւայ Բիւզանդեան « Խաղարիք » բանակաթեմին ազգեցութիւնը, անոր համար ինչպէս Տրապիզոն Խաղտեաց մէջ է, նոյնպէս է ի մասնաւորի Բարբերգ. եւ այս քաղաքս գրուած բազմաթիւ Հայ ձեռագիրք նաեւ նորագոյն դարերու՝ գրեթէ միշտ « երկիր Խաղտեաց » կ'ըսեն. եւ ասկէ դարձեալ նաեւ նոր բանասիրաց ոմանց կարծիքը թէ Բարբերգ Հայախաղտեաց վերարբերէր: Վերջինս ճիշդ է. հին Հայաստանի աշխարհագրութեան համեմատ Բարբերգ-Սպիր միակ դաւառ մըն էին, Բարձր-Հայոց մէջ. սակայն այս խնդիրները հեռուն կը տանին զմեզ: Միւս կողմանէ հին « Հայախաղարիք » փաստ